

կը զրգռէ բայց անկից կը սպաննուի »  
դէպքը որ մեզ կը հետաքրքրէ, հետեւեալ  
բառերով կ'արտայայտէ. —

« Ὁς ἀκίμαστος καὶ εἰς ἀμιλλαν ἀρετῆς τὸν  
« Ἄρη προκαλεσάμενος ἀνηρέθη οὗτος  
« κατὰ πρόνοιαν θεῶν εἰς ὀμῶνυμον ὄρος  
« μετεμορφώθη. »

Հայկական աւանդութեան համաձայն  
Արտաւազդ փակուած է Մասեաց լեռնե-  
րուն մէջ: Իսկ Միհրը կրնայ մեր պատ-  
մութեան Մհերը եղած ըլլալ որ Վասպու-  
րականի ժայռերուն մէջ փակուած է Տոս-  
պի « ագռաւաքար » ըսուած տեղը: Մհերի  
դուռը կը գտնուի Վանայ կողմերը:

Արայ Գեղեցիկը համաստեղութեան մէջ  
ալ սեփական աստղ մ'ունի, իսկ հայոց  
հին ամիսներէն մէկը իրեն նուիրուած ըլ-  
լալով կը կոչուէր « Արաց ». ինչպէս որ  
Հռովմայեցիք Յուլիս ու Օգոստոս ամիս-  
ները նուիրեցին Կեսարին ու Օգոստոսին  
յիշատակներուն:

Հայ ու օտար հեղինակներն ու աւան-  
դութիւնները քննելէ վերջ, բացայայտ-  
րէն կրնանք ընդունիլ Արայ Գեղեցիկի  
գոյութիւնը, որ եղած էր Հերոս թագաւոր  
մը կամ քաջութեան աստուած մը: Ունէր  
իր աստուածագգի շնիկները որոնք նա-  
խապէս կը կոչուէին « Յարալէզ » = յար-  
լզող, ու երբ Արայի մահէն վերջ անոր  
վէրքերը լզեցին՝ ստացան « Արալէզ » ա-  
նունը:

Արայ Գեղեցիկ զոհ գնաց իր հայրե-  
նեաց պատուոյն ու անկախութեան համար՝  
մերժելով զօրաւոր օտար թագուհի մը  
անպատուաբեր առաջարկները: Եթէ Արայ  
Գեղեցիկը լուր գոյութիւն ունեցող հերոս  
մը նկատենք՝ իր կողակիցը եղած կ'ըլլայ  
Նուարդ իշխանուհին, իսկ եթէ զինքը աս-  
տուած մ'ընդունինք, իր սիրուհին ու  
կրինն եղած էր Հայաստանի Աստղիկ զի-  
ցուհին:

Նիկոսիա

ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

### Խ Ո Ր Ա Ն Ե Կ Ը

Գրեղի ճամբուս մենութեան մէջ տխրագին  
Յիսուս մը մերկ տեսայ գամուած կոշտ փայտին.  
Յանկարծ բուրեան լոյսի կաթիլ մը դեղին  
Խաչեցեալին աչքերէն վար սահեցաւ:

Եւ ուրիշ մ'ալ բիրերուն տակը շողաց  
Եւ անոր մէջ տիեզերքն էր ամփոփուած,  
Եւ անոր մէջ Աստուծոյ ցաւն էր գրուած  
Ան ալ ինկաւ հողին վըրայ փըշանուտ:  
Ո՛վ գիտէ թէ քանի՛ երկար տարիներ  
Արտասուած էր այսպէս մինակ ու լրօին.  
Քանի՛ անգամ հառաչանքով եկուորին  
Սիրտն էր բացած երանութեան գարունին:  
Չայն բարեպաշտ ձեռք մը կարծես գամեց հոն,  
Որ մերկ ըլլար յաւերժ տանջուած մարդերուն  
Ու գիտնայինք մրրիկին մէջ մեր հոգւոյն  
Թէ մեզ համար կայ լուռ Աստուած մ'արտասուող:

Հ. ՎԱՋԱՆ ՅՈՎՃԱՆՆԵՍԵԱՆ

## Գ Ր Ի Գ Ո Ր Տ Ա Թ Ե Ի Ա Յ Ի Ի Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ը

Թուական « Ի թիւ հայոց հարիւրուերից, և երկուսուսն սկիսեալ երից » = 1387

Ա. ԹՈՒՂԹՔ. — Երեք հարիւր երե-  
սուն (330):

Ծառօք. — Ըստ կատարուած թուա-  
գրութեան էջ 50-էն կրկնուած է մինչեւ  
էջ 70: Այսպիսով ուրեմն թուղթերուն  
ընդհանուր թիւը կ'ըլլայ 350 (Երեք հա-  
րիւր յիսուն): Էջերն ու թուահամարները  
նշանակած ենք ըստ կատարուած թուա-  
գրութեան:

Բ. ՄԵՆՈՒԹԻՒՆ. — 13 1/2 × 9 1/2 հա-  
րիւրորդամեղր:

Գ. ԳՐՈՒԹԻՒՆ. — Երկսիւնակ: Ամէն  
մէկ սիւնակի լայնքն ու երկայնքը՝ 3 × 9:

Դ. ՏՈՂԵՐ. — Խւրաքանչիւր սիւնակն  
ունի 21 տող:

Ե. ՆԻԻԹ. — Նուրբ և սպիտակ ընտիր  
մագաղաթ:

Զ. ԿԱԶՄ. — Տախտակակող, կաշե-  
ծածկ և ապա պատուած ոսկեայ թիթե-  
ղով, իսկ մէջքը ամբողջութեամբ ոսկեհիւս  
շղթայ: Բացուելու կողմը ոսկեայ կափա-  
րիչ: Չախակողմին վրայ անարուեստօրէն  
փորագրուած է Յիսուսի խաչելութիւնը:  
Խաչը Գողգոթայի վրայ, վարը գանկ և  
բազկոսկրներ: Խաչին ձախակողմը կանգ-  
նած է Ս. Աստուածածին, իսկ աջակողմը՝  
Ս. Յովհաննէս: Խաչին զլիսովերը՝ « ԹԳՐ  
ՀՐՅ » մակագրութիւն: Աջին՝ արեւ, ձա-  
խին՝ լուսին:

Կազմի աջ կողքի ոսկեայ թիթեղին վրայ  
նոյն արուեստով փորագրուած են Յով-  
հաննէս Որոտնեցիի և Գրիգոր Տաթե-  
ւացիի նկարները: Երկուքն ալ կանգնած  
են կամարներու տակ պատարագչի արքե-  
պիսկոպոսական հանդերձներով զգեստա-  
ւորեալ: Երկուքն ալ ձախ ձեռքերնուն  
բռնած են աւետարան, իսկ աջ ձեռքերը  
բիչ մը բարձր՝ խաչակնքելու դիրքով:  
Որոտնեցիի գլուխը լուսապսակ է, իսկ Տա-

թեւացին սրածայր զլիսարկ մ'ունի, որ  
կը նմանի և՛ եպիսկոպոսական թագի և՛  
վեղարի, դարձեալ լուսապսակ: Որոտնեցիի  
մօրուքը սպիտակ է, իսկ Տաթեւացիինը՝ սև:  
Նկարներուն վերը գրուած է հետեւեալը.

« Սր. Յօհաննէս Որոտնեցի » « Սր. Գրիգոր  
Թարեւացի »:

Բացուելու կողմի ոսկեայ կափարիչ —  
պահպանակը զարդարուած է Քրիստոսի  
դաստառակի պատկերով, որուն աջ ու  
ձախ կողմէն բռնած են երկու թեւատա-  
րած հրեշտակներ: Կափարիչին վրայ կայ  
հետեւեալ մակագրութիւնը — « Դաստա-  
րակն է Քրիստոսի »: Կազմի կափարիչի  
ոսկեշղթայ կապերէն մէկը կայ (վերին),  
իսկ միւսը (վարին) կտրուած է:

Է. ՊԱՀՊԱՆԱԿ. — Չունի:

Ը. ՀԱՆԳԱՄԱՆՔ. — Պահուած է շատ  
լաւ և խնամքով: Իրր մասունք և սրբու-  
թիւն գրեթէ միշտ անձեռնմխելի մնացեր է:

Թ. ԳԻՐ. — Պարզ, սիրուն և վարժ  
ձեռքի բոլորգիր: Նոր տողերուն զլիսա-  
տառերը գրուած են ոսկեգոյն երկաթա-  
գրերով:

Ժ. ԹԱՆԱՔ. — Սեւ: Աւետարաններուն  
ցանկերը (չորս տեղ) գրուած են կարմիր  
թանաքով, իսկ համարարառները՝ կա-  
պոյտ թանաքով: Էջ 20բ, 87բ, 146բ,  
237բ (աւետարաններու սկզբի էջերը)  
գրուած են ոսկեգոյն թանաքով:

ԺԱ. ԶԱՐԴԱԳՐԵՐ, ՆԿԱՐՆԵՐ, ԽՈՐԱՏԱ-  
ԶԱՐԵՐ, ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԵՐ ԵՒՆ. — Խո-  
րանագարդերը սկիզբէն՝ 12 հատ, այս-  
պէս. էջ 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, (երկսիւն  
խորան) 10ա, 11բ, (երկսիւն խորան) 12ա,  
13բ, և 14ա (երեքն ալ երկսիւն խորան-  
ներ):

Մատթէոս աւետարանիչ էջ՝ 19բ, զի-  
մացը խորանագարդ: Մարկոս աւետարա-

նիչ էլ 86բ և խորանագարդ: Ղուկաս աւետարանիչ էլ 145բ և խորանագարդ: Յովհաննէս Աւետարանիչ էլ 263բ և խորանագարդ:

Տէրունական պատկերներ, բոլորն ալ գունագեղ, այսպէս.

- էլ 24 ա. Յիսուսի փախուստը
- » 27 բ. » Մկրտութիւնը
- » 45 ա. » Այլակերպութիւնը
- » 55 բ. » մուտքն յԵրուսաղէմ
- » 74 բ. » արթնքը Գեթսեմանիի մէջ
- » 79 բ. » չարչարանքը
- » 82 բ. » Յարութիւնը
- » 83 բ. » երեւումն աշակերտաց
- » 133 բ. Յիսուս Գեթսեմանիի պարտէզին
- » 134 բ. Յիսուսի մատնութիւնը [մէջ]
- » 138 բ. » խաչելութիւնը
- » 147 ա. Աւետումն Զաքարիայի
- » 148 բ. » Ս. Կուսին
- » 153 բ. Ընծայումն ի տաճարն
- » 178 բ. Յիսուս կ'օրհնէ հացն և ձուկը
- » 204 ա. Յարութիւն Ղազարու
- » 277 ա. Ոտնալուայ
- » 281 ա. Յիսուս վերնատան մէջ
- » 295 ա. Յիսուս դէպի Գողգոթա
- » 295 բ. Յիսուսի խաչելութիւնը
- » 300 ա. Յիսուս և Թովմաս առաքել
- » 301 բ. Թովմաս կը շօշափէ Յիսուսի վէրքերը
- » 302 բ. Յիսուս Տիբերիական լճի ափին
- » 304 ա. Յիսուս և Զեբեթեայ որդիքը
- » 308 բ. Յովհաննէս Որոտնեցին և Գրիգոր [Տաթեւացին]

Խորանագարդներ՝ էլ 5բ, 6ա, 11բ, 12ա: Աւետարանիչներ և զիմացի ճակատագրողներ էլ 19բ և 20ա, 86բ և 87ա, 145բ և 146ա, 235բ և 236ա: Ամբողջ բնագրին մէջ կան 213 լուսանցազարդեր (խաչկալ, ծաղկէնկար, զարդանկար, մարդկային դէմքեր եւայլն): Ամէն մէկ լուսանցազարդի մօտ կայ նաեւ զարդագիր մը (մարդագիր, թռչնագիր, ձկնագիր, ծաղկագիր եւայլն): Այսպիսով ուրեմն կ'ուսնենանք 426 զարդանկար և զարդագիր, բաց ի սկզբի խորանագարդերէն և տէրունական նկարներէն, զորս մի առ մի յիշեցինք: Զարդագիր են նաեւ չորս աւետարաններուն սկզբնատողերը: Նկար-

ներուն գոյները առհասարակ վառ են և թարմ, կան նկարներ, որոնց գոյները նորոգուած են: Տէրունական նկարներուն գոյները շատ ներդաշնակ են, թէեւ զիմաց՝ գծերը անարուեստ են և յաճախ տգեղ: Հիւնալի են նկարներուն գոյները, մանաւանդ ոսկեգոյները, որոնք մնացեր են վառ ու թարմ: Ոսկեգոյնով գրուած բոլոր սկզբնատուներն ալ՝ նուրբ և սիրուն գրուած, թարմ մնացեր են:

Խիստ արժէքաւոր է այս աւետարանը իբրեւ մանրանկարչական մանրակրկիտ աշխատանք:

ԺԲ. ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ ԿԱՄ ԷԶ. — Էլ 1ա և բ, 2ա և բ, 4ա և բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա, 12բ, 13ա, 14բ, 15ա, 144բ, 309ա և բ, 310ա և բ: Էլ 5-15 դատարկ էջերը խորանանկարներու էջերն:

ԺԳ. ԹՈՒԱԿԱՆ. — Աւետարանի գրչութեան թուականը ըստ գլխաւոր յիշատակարանի հետեւեալն է. — «Ի թիւ հայոց հարիւրութից, և երկուսասն սկըսեալ երից» 1387:

ԺԴ. ԳՐԻԶ. — Գրիգոր Տաթեւացի:

ԺԵ. ՏԵՂԻ ԳՐԶՈՒԹԵԱՆ. — Դարանաղեաց գաւառի Սեպուհ լեռան:

ԺԶ. ՏԵՐ ԿԱՄ ՍՍԱՅՈՂ. — Խուժուշահ:

ԺԷ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ. — Աւետարան (լրիւ):

ԺԸ. ՄԱՆՐ ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆՔ. — Մատթէոսի աւետարանի վերջը, էլ 84բ.

«Ով դասը լուսերամից. և կաճառը ամենափայլը: Մանկունք՝ նորոյ Սիոնի, փեսաւէրը հարսին եկեղեցւոյ՝ հարը և եղբարը: Վայելաւոր աստուածախաւս մատենիս՝ լսուղը և ընթերցանւղը: Յերեսանկեալ աղաչեմ զձեզ վասն սիրոյն քրիստոսի, յիշատակել առաջի զենմանն գառին՝ գտիեզերալոյս մեծ բարունապետն զյովհաննէս՝ որոտնեցի՝ հանդերձ ծնողաւք իւր կրկնակի: Եւ ինձ մեղապարտ աշխատողիս հայցել զթողութիւն: Զոր ձեզ և մեզ հասարակ սլարգեւեսցէ՝ որ առատն է յամենայնի»:

1. Այս անունը գրուած է ոսկեգոյն տառերով:

Էլ 246ա. «Ով եղբայր կուշտապեցնեն չեն թողուլ որ կամաց գրեմ»:

Էլ 295բ. Յիսուսի խաչելութեան մեծադիր նկարին տակ բոլորգորով գրուած է այս երկու տողը.

Նկարող սորա՝ զկեսարացի շչտը արդյս և զծմաւղս իմ աղաչեմ յիշել ի տր.»:

Այս տողերը կու գան հերքելու ցարդ ընդունուած այն կարծիքը թէ Գրիգոր Տաթեւացին եղած է այս աւետարանին մանրանկարներուն և տէրունական նկարներուն նկարիչը: Կը թուի որ Տաթեւացին միայն գրած է աւետարանը, որ սկզբէն մինչեւ վերջ միեւնոյն գրչին գործն է: Անտարակոյս է, որ աւետարանին նկարող — ծաղկողը յիշեալ Խաչատուր արեղայ կեսարացին է: Խաչելութեան այդ նկարին (էլ 295բ.) շատ նման են աւետարանին մնացեալ բոլոր նկարներուն ոճը և գոյներն ու արուեստը: Պիտի յիշենք նաեւ, որ խաչելութեան այդ նկարը ամենայաջող նկարն է, որուն տակ նկարողը յիշատակագրած է իր անունը:

Կրնանք ենթադրել նաեւ, որ այդ մէկ նկարը միայն կեսարացին նկարած է, ով զիտէ, թերեւ Տաթեւացիին խնդրանքով:

Աւետարանին միւս բոլոր նկարներն ալ միջակ վրձինի գործ են, զոր կրնանք Խաչատուր արեղային վերագրել, թէեւ այս բանի վրայ չենք պնդեր, վասնզի զիտենք որ Գրիգոր Տաթեւացին ալ մանրանկարիչ եղած է և թողած է նկարներ:

ԺԹ. ԳԼԽԱՌ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. — Այս յիշատակարանի (էլ 307ա և 308բ) ձեռագիրն ու շարադրութիւնը անկասկած է որ Գրիգոր Տաթեւացիին են.

Ի թիւ հայոց հարիւր ութից, և երկուսասն սկըսեալ երից: Յանկացայ այսմ տառից, աստուածագործ սուրբ մատենից: Զի գրաւական միշտ պահեցից, խոստման բանիցըն տէրունից: Վ«դպ»ես Յոհաննէս՝ աշխարհաւ սիսակէից, գաւառաւ, որոտնէից: Զմագաղաթս՝ ձեռամբ իմս բազկից, շինեցի նիւթ պիտոյից:

Ի սմա գրեցաւ յոյս բնաւից, ձեռամբ անբիծ բաղձող բանից: Զեռնասընունդ որդի բանից, Գրիգորիոս՝ հասեալ ի գահ պւէտէից: Զրաւ գրչութեանս ի գաւառս Դարանաղից՝ ի լեռն սեպուհ, ուր դամբարան Լուսաւորչին հայոց ցեղից: Այլ արհնութեամբ անգրաւ բանից, յիշեցէք զիշխանն զլուս բարեպաշտից: Զհայկազնի զարմ մեծից, զխուժուշահ ծնունդ հրաշից: Որ ետ պատել զաւետարանս՝ հալալ յընչից: Ի յիշատակ իւր և ծնողաց՝ այլ և զարմից: Նաեւ մեր ծնողաց յիշատակ ի սմա բանից: Աղաչեմ զհանդիպողսդ այսմ աստուածաբուխ տառիս, զվերոյ գրեալսդ յաղաթս յիշեցէք. և աստուած զձեզ յիշէ:

Այս յիշատակարանին ճիշտ վարը կը գտնուի Յովհաննէս Որոտնեցիի և Գրիգոր Տաթեւացիի նկարը (էլ 308բ): Նկարի խորքը ոսկեգոյն է, կապոյտ սիւնով զոյգ կամարներ և կարմիր շրջանակ: Երկուքն ալ պատարագչի զգեստներով հանդերձեալ են: Այս նկարը միւս բոլոր նկարներուն համեմատութեամբ ամենայաջող և գեղեցիկ նկարն է, որուն գոյները շատ ներդաշնակ են, զիմագծերը սիրուն և արտասայտիչ: Նկարին տիրող գոյնը ոսկին է, ապա բաց կարմիր, բաց կապոյտ, շիկագոյն եւայլն: Որոտնեցին զլսաբաց է, ճակատը լուսապսակով շրջանակուած, մօրուքն սպիտակ և կլոր: Տաթեւացին վեզարով է, որ նման է նաեւ եպիսկոպոսական խոյրին լուսապսակով շրջապատուած, մօրուքը սեւ և սրածայր:

Այս աւետարանը կը պահուի յատուկ պատրաստուած քսակի մը մէջ, որուն չափն է 32 X 21 հարիւրորդամիզը: Մութ — կարմիր խորքին վրայ արծաթաթել հիւսուած են գեղեցիկ և համաչափ ծաղիկներ: Քսակի երիզներն ալ ծաղկաւուն հիւսուածք ունին: Աստուր հասարակ մոխրագոյն և դեղնաւուն կտորներէ կարուած է: Քսակի վարի երկու անկիւնները մետաքսեայ ծոպեր ունին, իսկ վերի կողմը փակելու համար երկար մետաքսեայ կապ մը:

Աւետարանէն լուսանկարած ենք խորանանկարներն և տէրունական նկարներ՝ թուով 24 տեսակ:

\* \* \*

Գրիգոր Տաթևացիի այս աւետարանը Տաթևի հոչակաւոր մենաստանի թանգարժէք հարստութիւններէն մէկն է, իբր հրաշագործ մասունք՝ յաչս Զանգեզուրի գեղջուկ ու բարեպաշտ ժողովրդեան:

Ժողովուրդը անհուն սիրով ու ջերմ հաւատքով կապուած է այս աւետարանին և անոր սրբազան տիրոջ՝ Գրիգոր Տաթևացիին հետ, որուն գերեզմանն ալ ուխտատեղի է հաւատացեալներուն համար,

որոնց աչքին Տաթևացին հրաշագործ սուրբ է:

Տաթևի վանքին արքեպիսկոպոսական հանդերձները (պատարագչի) ինչպէս նաեւ այս աւետարանը պատերազմի և իրար յաջորդող դէպքերու տարիներուն փոխադրուեցան թաւրիզ և այժմ իբր ազգային աւանդ կը պահուին Հայոց Առաջնորդականին մէջ, Տաթևի երբեմնի վանահայր և Ատրպատականի Հայոց արդի Առաջնորդ Գեորգի Ներսէս Արքեպ. Մելիք-Թանգեանի հսկողութեան տակ:

Թաւրիզ  
24 Ապրիլ 1933

ՀԱՅ ԼԱՅՈՒՆ

# Լ Ո Ն Տ Ո Ն Ի

(ԹԱԻՐԻԶՈՒ)

Թ. 66 ԱԻԵՏԱՐԱՆԸ

Թողոք՝ 252. - Մեծոքիւն՝ 16×12×4 հրդմ. - Գրոտրիւն՝ երկսիւն. - Նիւր՝ լաւ յղկուած թուղթ, դեղնորակ. - Տողք՝ 21. - Կազմ՝ կարմիր թուղթէ երեսով խաւաքարտեայ, Նոր. - Մագաղարեայ պանպակեայ շիւն. - Հանգամանք՝ լաւ պահուած. սկզբնական կաշեայ կողքերը ինկած և ի նորոյ կազմուած. մաշած շրթունքները դանակի տակ կտրուած լուսանցքի զարդերը վնասուած: Չորս աւետարաններն ալ ունին իրենց մանրատառ նախադրութիւնները. ստորին լուսանցքներու վրայ կան համաբարբառի համարանիշերը, սեւ ու կոկիկ գրով: Չորս աւետարաններն ալ լման են, ինչպէս նաեւ յիշատակարանը. - Դատարկ րեղոք՝ չորս թերթ սկիզբն ու վերջը. - Ակրեւատաք իւրաքանչիւր խորանագարդ էջի վրայ, մարդագիր, կենդանագիր և թռչնագիր, վայելուչ նկարչութեամբ. համարները ունին կարմրադեղ յաջող երկա-

թագրեր. - Գիր՝ սեւ մեկանով ընտիր բուրդգիր. - Վերնագիրք՝ իւրաքանչիւր խորանագարդ էջի վրայ, միշտ երեքական տող. առաջինը զարդագիր, գունազարդ, յաջորդական տողերը կարմրադեղ և մանուշակի կարմիր երկաթագիր. - Լուսանցագարդք՝ չորս մեծ, իւրաքանչիւր խորանի կից, զարդարուն: Ներքին բոլոր լուսանցագարդերը սովորական մօրիֆներ, կարմիրի և լազուարտի ծաղկումով. - Խորակր չորս հատ, չորս աւետարաններու սկիզբը, էջ 1. 139. 229 և 383, բոլորն ալ հայկական և պարսկական մօրիֆներ յաջող ծաղկումներ, լազուարտ յատակի վրայ, մեծ ու փոքր վարդեակներով. - Նկարք, մանրակարք և կիսախորակը կը պակսին: Գրիչ՝ Անանիա արեղայ. - Ստացող՝ Ստեփանոս քհնյ. - Տեղի՝ Հերմոնի վանք. - Ժամանակ՝ ԶԺԸ (+ 551) = 1469. - Ծաղկող՝ անյայտ: Զեռագիրս 1926 մարտ

6ին նուէր տրուած է Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցւոյն, Խաչիկ Խան Սարաճեանի կողմէ:

Մատեանս է Աւետարան, թղթեայ, նկարուն, ուր կան չորս աւետարանները լման. կը պակսի «Իրք կնոջն շնացելոյ» մասը: Յիշատակարան՝

Ա. - էջ 500ի վերջ Յովհաննու աւետարանի. - «Փառք անեղ Բանին աստուծոյ: Երիցն ի միում կատարեալ առանձնաւորութեամբ. և միաւորեալ ըստ աստուածութեան, եռահրաշ...»

Եւ արդ գրեցաւ սա ի թուարբրութեանս հայոց: ԶԺԸ (1469) ի հայրապետութեանս տեանն Ընդհանրականի: Գրեցաւ սուրբ աւետարանս ի վանքս Հերմոնի ընդ հովանեաւ սուրբ ռուսաւորիս և սուրբ յակոբիս և սուրբ ստեփանոսիս. և սուրբ վարդապետացս որ աստ կան հանգուցեալ: և ի յառաջնորդութեան սարգիս յարունակետիս Զեռամբ սուտ յանուն անակիւնի գրչի. որ անուամ(ք)ս միայն խարեղս և ոչ գործով: Արդ ամենայն ոք բարոյ ցանկայ վասն սիրոյ արքայութեան որպէս ասէ առաքեալն. թէ երանի որ ունիցի զաւակ ի սիննի և ընդանի եմ: Ես ստեփանոս քահանայս. ստացայ սուրբ աւետարանս, և ետու գրել զսայ յիշատակ ինձ և ծնաւոց իմոց. հաւրն իմո անիրիկ, և մաւր իմ քանիկիկ. և հարեղբաւրն իմ մկրտչի յառակրաւն արեղայի, և կողակցին իւրմարիկն? և որդին իւր յակոբ. աշխատես, գրիչոր, արխատակեան: և զգուստրն իմ գմար-

գարիտն. և զքոյրն իմ Լուսինիք, զհռոտիսիկ, և զա արեան մերձաւորսն. զկենդանիսն և զհանգուցեալսն. և աստուած որ առասն է ի տուրս ողորմութեան ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս ողորմացի իւր միւսանգամ զալրստեամբն ամէն և եղիցի:

«Դարձեալ յերես անգեալ աղաչեմք զձեզ ով մանգունք սուրբ եկեղեցոյ որք կարողալով կամ աւրինակելով զվերին ըստացող սուրբ աւետարանիս զուստայ միլիանն որ ըստացաւ զսայ յիշատակ իւրն և ծրնաւոցն իւրոց, ուստայ յակոբիկ և կողակցին իւրոյ տայալիկ և իւր զաւակին մանկաշիկն ճիկարիկ. քրիստոս աստուած աւրհնէ զուստայ զմիւրաւն և զիր որդին և զխոշիկայր և զանկոյր որ և զմայրն սոցա զհռոտիսիկայն. յիշեցէք ի քրիստոս և աստուած զձեզ յիշէ ամէն »:

Բ. - էջ 501. - Դարձեալ վերջին ստացող սուրբ աւետարանիս ընդհանրական քնյ. որ ստացայ մեարտիկ կպիկ զաւետարանս ի հալալ ընչից իմոց, առի. Ժ. ո. դահեկ: Յիշատակ ինձ և ծնողաց իմոց. հօրն իմ խոպասիկ, մաւրն իմ պիկի խարունիկ, կողակցին իմ տիրպարիկ, որդոյն իմոյ զարայ նորաբողոք սարկաւազիկ. աղամիկ. առ հասարակ ամենայն աշխատողացն սոցայ յիշեցէք զտէրն ամենայնի: ի թվ. ամե (1566). ի յառաջնորդութեան սուրբ արտայ ստարիկ, ըստեփանոսարեկի. ի թագաւորութեան շահ քահանայիկ, կաթողիղոսութիւն էջմիածնիկ Տէր Միքայելիկ:

Լոնտոն, 25 Օգոստոս 1934  
ԱՐՏԱՆԱԳՐ ԱՐԲԵՊՍ.